

կալ, փորլի վրան մի փալլուն րան ունի. երբ մէջքի վրալ է ընկնում, նրա փորլի գոլնից երկինքը փալլատակում է:

Կալծակի Համար ասում են, թէ սատանի Համար է իջնում:

Անձրևի ժամանակ եթէ կառկարանքը դէպի վեր կանգնեցնեն, կարկուտ չի լինիլ, և մէկ էլ՝ եթէ յորդ անձրև լինի, կը խաղաղի:

Կարկտի ժամանակ թէ որ Յ Հատ կարկուտ կիսուի, կարկուտը կրկանգնի:

Քամու Համար ասում են՝ եթէ նա երևար, բոլոր մարդկանց կը ջարդէր:

III. ԲՆՈՒՔԵԱՆ ՏԱՐՐԵՐԸ.

(Հողը, օդը, ջուրը և կրակը)

Ահա մի քանի աւանդութիւններ ու նախապաշարմունք բնութեան տարրերին վերաբերեալ:

Հող: Բաննլլա տրեխը մտած Հողը պէտք է արտում թափուի, թէ չէ՝ արտի «րէ"րէ"քէ"թը» կը դնայ:

Քար: Միքիչ խելօքները կարծում են, թէ քարը Հողիցն է եղել. շատերն էլ ասում են, թէ մի ժամանակ Աստուած թափել է անձրևի նման: Կան ուրիշներն էլ, որոնք ասում են, թէ քարը առաջ ոչխար է եղել. վերջը Աստու Հրամանով քարացել է: Քարի մասին այս աւանդութիւններն են պատմում:

Աղամբ որ Հերկ էր անում, Աստուած մի քար ցոյց տուեց նրան արտի մի կողմը, իրրև սահման, պատուիրելով, որ նրանից դէնը չանցնի: Բայց նախամարդը այս պատուէրն էլ չը պահեց. քարի միւս կողմն անցաւ: Դրանից է մնացել սահմանն անցնելը:

Պատմում են էլի, թէ քարը մի ժամանակ մեծամտելով՝ ալնքան է ուռել, մեծացել, Եր մարդուն տեղ չի մնացել: Դրա Համար Աստուած անիծել է նրան, և դրանից է որ Հիմա անշարժ ու անխախտ մնում է իր տեղին:

Ջուռ: Ջրի համար ասում են, թէ ձկան չի երևում. նրա համար է մէջը մնում:

Աղբիւրի համար ասում են, որ նա իր ջուրը մի գետից է քաշում:

Կրակ: Կրակը կայծակից է մնացել երկրի վրայ:

Կրակի վրայ ջուր չեն ածում և ոչ էլ փչելով հանգցնում. այլ ուղղակի մոխիր են ցանում վրան և տակը «կորխում»:

Ով որ վախում է մի տեղ գնալուց, ծոցը պէտք է դնի հանգած կրակ, կամ հացի այրած «քերիջ» (կճիպը, չորը):

Սովորաբար կաթ եփելու ժամանակ, երբ «ջուկը» (պղինձը) կախած է լինում օջախի վրայ, կաթի տակից կրակ չեն տալիս. լաւ չէ. կաթի «բէ՛րէ՛քէ՛թը» կը պակսի, կամ թէ չէ՝ կովը «կակնըռէ՛» (աչքը կը դիպչի):

Ուրիշի տնից կրակ կամ խանձող բերելիս, պէտք չէ խառնել տան կրակի հետ, թէ որ օջախը վառ լինի. թէ չէ՝ տան «դէօվէ՛թը» յետ կերթայ:

Մալխին կրակի վրայ դրած կաթի տակը չեն փչիլ. մեղք է:

Մալխին էլի՝ դրացուն կրակ տալը լաւ չէ:

Մեռելը լողացնելու համար տնից կրակ վերցնելը լաւ չէ: Երեխան որ մի տնից ուրիշ տուն կրակ տանի և ինքը վառի, լաւ չի լինիլ. այն տանը մեռել կը լինի:

Հաւը թուխս դնելու ժամանակ՝ բոլոր ձուկը դնում են մաղի մէջ և օջախի շղթայի — «կլմբուրի» շուրջը Յ. անգամ պտտեցնում, ասելով՝ «բազըն տեսնու՛ ծակը փախիր. դիափը (չախկալ) տեսնու՛ ծառը փախիր» կամ թէ ուրիշ կերպ ասում են. «դիափն օր դայ՝ ծառին ծէ՛րը՝ բազըն օր դայ՝ պուլքը (թուփը)»:

Էլի թուխս դնելիս՝ մինչև ձագ հանելը, օջախում ձու «կորխելը» (մոխրի մէջ թաղել) լաւ չէ. ձագը կը կպչի կճեպին և չի լինիլ:

Մալի ոսկորը կրակը չեն գցիլ, թէ չէ՝ մալը կը սատկի դրանցից:

Սերմացու «լաղտի» — սիմինդրի «կոթուր» (զլուխը առանց հատիկների) չեն այրիլ՝ — հատիկը ցանելուց յետոյ. թէ չէ՝

գլուխը հատիկ չի բերել. մութ կը դառնայ: Գլխ համար «կոթոնները» տանում են մը խոռոչ անդ թափում, ող մալը չը տեսնի ու չուտէ:

«Լազար» ցանկուց լետոյ «փօթ» («բատի-բուտի») էլ չեն անում. թէ չէ՝ գլխակուց լետոյ վրան «փօթի» պէս սունկ կը տայ, կը փչանայ:

Ամանը լետ առնելուց լետոյ՝ թէ որ «կլմբուրը» (օջախի շղթան) շարժուի, պէտք է բռնել ու կանգնեցնել. թէ չէ՝ տանտէրը տառաքել էլանալ:

Կասկարանքի վրայ նստողը շատ աղջիկ կը բերի:

Երեկոցան մէկին թան տանելիս՝ թէ որ նործին կովեցն է, մէջը հացի ալրած քերիջ կամ կրակած ածուխ են գցում, որ կտլը «չակնրուէ»:

Ով որ թռչունի բուն տեսնէ և կրակի կամ ջրի մօտ մէկին ասի, բունը կը ճիւղտի, մըջիւն գուրս գալ, ալն տան «բէ՛րէ՛քէ՛թը» շատ կը լինի:

Չար աչքը դիպածին—«ակնրուածին» այսպէս են բժշկում: Խոտիկ հետ միքանի ուրիշ երկաթեղէն կրակն են գցում, տաքացնում, վերջը հանում, վրաները ջուր լցնում և «ակն-բուածին» դրանց գոլորշու վրայ կանգնեցնում, որ կուլ տայ: Գլխան համշէնցիք ասում են «խոտիխաշ»:

Կալ ուրիշ միջոց էլ: Ալերցնում են մէկ աման ջուր. մէջը գցում են միքանի կրակած ածուխ-«քեօղ». գոլորշին տալիս են «ակնրուածին», որ կուլ տայ. ջրից միքանի կում խմեցնում. մի քիչ էլ սրտին քսում. մնացած ջուրը լցնում են օջախի չորս անկիւնը, նրա միջի հանգած ածուխներն էլ մոխրաթաղ են անում օջախի չորս անկիւնում: Ամանն էլ շուռ են տալիս, տակն ու վրայ են անում. տակի երեսին մի կրակած ածուխ դնում և թողնում որ ինքն իրան մարի, մոխիր դառնալ՝ դրանից լետոյ չար աչքը կանցնի: Գլխան էլ ասում են «կէ՛ծխաշ»: